ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2017թ. թիվ 288-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի 1-ին մասով, 1.12-րդ կետի «բ» ենթակետով, հաշվի առնելով զեկուցագրերը և քաղաքացիների դիմումները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից աջակցության նպատակով քսանմեկ քաղաքացու հատկացնել 365000 /երեք հարյուր վաթսունհինգ հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2017թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր